է տնտեսական և, այսպէս ասենք, բնախօսական սերտ կապակցութեան մէջ Ազրբէջանի հետ և միացումը այս վերջինի հետ պահանջում են Ղարաբաղում ապրող երկու ազգութիւնների շահերը»:

Պարզ ու կտրուկ. Ղարաբաղի հարցը միայն Ղարաբաղը Ազրբէջանին կցելու խնդիր չէ, այլ և Զանգեզուրն ու Նախիջևանը Ազրբէջանին միացնելու:

Օգոստ. 22-ի համաձայնութիւնը ցնծութեամբ ընդունեց ամբողջ Ազրբէջանում: Մուսաւաթի պարագլուխ Ռասուլ Զադէն թարգմանը եղաւ ընդհանուր ուրախութեան:

«Ղարաբաղը, գրում էր նա,*) մեր հայրենիքի այդ սիրուն վայրը ազատուեց մեր յամառ դրացիների ոտնձգութիւններից, որոնք ջլատում էին մեր տնտեսական կեանքը, և մեր ջրերի վերին հոսանքը բռնելով՝ ուզում էին մեզ նեղ դրութեան մատնել: Առանց տեղի տալու աւելորդ արիւնհեղութեան՝ հայ ժողովուրդը բռնեց հարցի խաղաղ լուծման ճանապարհը և ընդունեց Ազրբէջանի գերիշխանութիւնը:

Նախիջևանը, որ իր բնական պայմաններով խսկապէս «Նախշը-Ջիհան» (աշխարհի զարդանկար) է և անբաժան մասը Ազրբէջանի, շնորհիւ իր հերոս ու անձնուէր զաւակների հայրենասիրութեան, օգուտ ապստամբելու իրաւունքից՝ միանալու համար հայրենիքին, որից բաժանուել էր խաբելով: Նախիջևանը իր սահմանից դուրս շպրտեց բռնադրաւող Հայաստանի բանակը:

Գալով Զանգեզուրին, որ ցաւ է դարձել մեզ համար և մէջտեղը կանգնած է սպառնալով մեր նպատակներին, — կարող ենք յոյս ունենալ, որ նա էլ մօտ ժամանակում կը դրուի անվնաս դրութեան մէջ, և որ Առտարա գետից և Սամուրի կամուրջից սկսած մինչև Արաքս գետն ու Զուլֆայի կամուրջը կը բացուի անարգել մի ճամբայ: Այդ նշանակում է, որ այս կերպով Ազրբէջանի հողային պահանջների կարևոր մասը լուծում է ստացել»:

Եւ, իրօք, Ղարաբաղի հարցը «լուծելուց» յետոյ, Ազրբէջանը սկսեց տենդագին պատրաստութիւններ տեսնել Զանգեզուրն էլ «անվնաս դրութեան մէջ» դնելու համար:

---

*) «Ազրբէջան» (թուրքերէն), Բագու, 28 օգ. 1919թ.